"Hurry for Good" Foundation for Support of
Children and Citizens
Transaction account 1660030209882700
Correspondent account 1570079654760100
Correspondent Bank: Ameriabank
TIN:08220919
Yerevan, M. Baghramyan 3rd lane bld. 4/6 apt.15
Contact: info@kdobru.com, +374 55 519833

Financial Report

N	Item name	Number of Beneficiaries	Payout Date	Cost in USD
1	Surgical Procedure for Vard Sargsyan	1	31.07.2024	307$

Director of "Hurry for Good" Foundation for Support of Children and Citizens

Yelena Hakobyan

Ամերիաբանկ ՓԲԸ
Վազգեն Սարգսյան 2
Հեռախոս՝(+37410) 561111
Ֆաքս՝
Էլ. փոստ՝info@ameriabank.am

Տպված է՝09/08/2024 13:26 (UTC+04:00)

Փոխանցում հաշվին N 000197

Ամսաթիվ	**31/07/2024**	Նույնացուցիչ	**74b2a069-c69d-4ebc-b456-c0f20d85cafd**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1570079654760100	**1660030209882700**	**AMD**	**120,000.00**
Վճարողի անվանում	**«ՇՏԱՊԻՐ ԴԵՊԻ ԲԱՐԻՆ» ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՋԱԿ**		
Վճարողի բանկ	**Ամերիաբանկ**		
ՀՎՀՀ	**08220919**		
Շահառուի անվանում	**ՈՒԻԳՄՈՐ ԳՐՈՒՓ ՓԲԸ**		
Շահառուի բանկ	**ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ**		
Գումարը բառերով	**Մեկ հարյուր քսան հազար դրամ**		
Շտապ փոխանցում	**Ոչ**		
Նպատակ	**Համաձայն B5995792394, 31.07.2024, Նվ. պայմ. 5-24, Վարդ Սարգսյանի վիրահատության համար**		

Ստորագրող	**YELENA HAKOBYAN**
Ստորագրության կարգ	**I, II**
Ամսաթիվ	**31/07/2024 15:15:09.080**
Սարքի անվանում	**Digipass GO ընտանիքի սարք**
Սարքի սերիալ N	**3741176041**
Ստորագրություն	**670641**

Կատարված է

Նվիրաբերության պայմանագիր թիվ 5 -24

ք. Երևան «22» հուլիսի 2024թ.

«Շտապիր դեպի բարին» երեխաների և քաղաքացիների աջակցության հիմնադրամը, այսուհետ՝ Նվիրաբերող, ի դեմս տնօրենի Ժ/պ Ելենա Հակոբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և ՀՀ քաղաքացի Անյուտա Վիրաբի Մելիքյանը /անձնագիր՝ AU0273895, տրված՝ 19.05.2021թ., 063-ի կողմից, սոց.քարտ՝ 7404890012, հասցե՝ ՀՀ, Արմավիրի մ., գ. Շենիկ, Հ. Շիրազի փ., 2տ./, այսուհետ՝ Նվիրաբերություն ստացող, մյուս կողմից, միասին նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և նպատակը

1.1 Ղեկավարվելով Նվիրաբերողի կանոնադրական նպատակներով, սույն պայմանագրով Նվիրաբերողը բարեգործական նպատակներով Նվիրաբերություն ստացողին նվիրաբերում է **120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ**, այսուհետ՝ Նվիրաբերություն, երեխայի՝ Վարդ Սարգսյանի /ծնված՝ 06.01.2023թ., ծննդյան վկ.՝ № ԲԱ657002, սոցիալական քարտ՝ 5621230396/ ողնաշարի վիրահատության համար, իսկ Նվիրաբերություն ստացողը պարտավորվում է օգտագործել Նվիրաբերությունը բացառապես սույն կետում նշված նպատակների իրականացման համար:

2. Գումարի փոխանցումը

2.1. Պայմանագրի 1.1. կետում նշված Նվիրաբերությունը Նվիրաբերողը **120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամը** փոխանցում է «ՈՒԻԳՄՈՐ ԳՐՈՒՓ» ՓԲԸ-ի /հասցե՝ ք.Երևան, Արաբկիր թղմ., Հրաչյա Ներսիսյան փ., 10/7 շենք, ՀՎՀՀ՝ 00219271/ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1660030209882700 հաշվեհամարին:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1 Նվիրաբերություն ստացողը պարտավոր է՝ Նվիրաբերությունն օգտագործել Նպատակին համապատասխան, իսկ եթե իրադրության փոփոխման հետևանքով Գումարի օգտագործումը Նվիրաբերողի սահմանած Նպատակին համապատասխան դառնում է անհնար, այն կարող է օգտագործվել այլ նպատակով միայն Նվիրաբերողի համաձայնությամբ:

3.2 Նվիրաբերություն ստացողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխան:

3.3 Նվիրաբերություն ստացողը պարտավոր է Նվիրաբերության օգտագործման վերաբերյալ Նվիրաբերողին ներկայացնել ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթեր:

3.4 Նվիրաբերություն ստացողն իրավունք ունի Նվիրաբերողից հայցել և ողջամիտ ծավալով ստանալ Նվիրաբերության օգտագործման հետ մասնագիտական խորհրդատվական աջակցություն՝ պայմանով, որ հայցված աջակցությունը Նվիրաբերողի համար չի առաջացնի լրացուցիչ նյութական /ֆինանսական/ պարտականություն:

3.5 Նվիրաբերողն իրավունք ունի ցանկացած պահի հարցումներ կատարել Նվիրաբերության ծախսի վերաբերյալ և Նվիրաբերություն ստացողը պարտավորվում է նման հարցումը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել նման

հարցմանը և տրամադրել Նվիրաբերողի կողմից պահանջվող ցանկացած փաստաթուղթ, ինչպես նաև որոշ լուսանկարներ սույն Պայմանագրի շրջանակներում կատարված գործողություններից:

3.6 Եթե Նվիրաբերություն ստացողը Նվիրաբերությունն օգտագործում է Նպատակին անհամապատասխան, կամ այդ Նպատակը փոփոխվել է սույն Պայմանագրի 3.1 կետով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա Նվիրաբերողն իրավունք ունի պահանջել նվիրաբերության վերացում, ինչպես նաև պահանջել մինչ այդ պահը վճարված, բայց ոչ նպատակային օգտագործված Նվիրաբերության գումարները լրիվ ծավալով:

3.7 Նվիրաբերություն ստացողի կողմից սույն Պայմանագրի որևէ պահանջ չկատարելու դեպքում, Նվիրաբերողը կարող է միակողմանի արտադատարանական կարգով լուծել սույն պայմանագիրը լուծումից 5 (հինգ) օրացույցային օր առաջ ծանուցելով Նվիրաբերություն ստացողին:

3.8 Նվիրաբերողը որևէ պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրի կատարումից, ինչպես նաև Նպատակի իրականացումից՝ Նվիրաբերություն ստացողին կամ Երրորդ անձանց պատճառված որևէ վնասի /իրական վնասի և/կամ բաց թողնված օգուտի/ համար:

3.9 Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական կայքերում հրապարակումներ իրականացնել սույն Պայմանագրի Նպատակի շրջանակներում իրականացվող ծրագրի, աշխատանքների վերաբերյալ՝ նշելով մյուս Կողմին: Նվիրաբերություն ստացողը նման հրապարակումների տեքստը պետք է նախապես համաձայնեցնի Նվիրաբերողի հետ:

3.10Կողմերը իրավունք ունեն անել համատեղ հայտարարություններ և հղումներ (այդ թվում՝ մամուլում և սոցիալական կայքերում)՝ նախապես համաձայնեցնելով այդպիսի համատեղ հայտարարությունները և հղումները:

3.11 Սույն Պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Ֆորս-մաժորային հանգամանքներ

4.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

4.2 Սույն Պայմանագրի 4.1 կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է այդ մասին տեղեկացնել մյուս Կողմին 5 (հինգ) օրացույցային օրվա ընթացքում:

5. Վեճերի լուծման կարգը

5.1 Բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ սույն Պայմանագրի արդյունքում, կամ առնչությամբ, պետք է լուծվեն ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

5.2 Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերում բոլոր կողմերը ղեկավարվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը:

7. Գաղտնիություն

7.1 Կողմերը պայմանավորվում են, որ սույն պայմանագրի դրույթները, և Կողմերի միմյանցից ստացվող ամբողջ տեղեկատվությունը ինչպես նաև՝ «գաղտնի» նշված կամ միայն ստացողի համար նախատեսված տեղեկատվությունը համարվում է գաղտնի (հետագայում՝«Գաղտնի տեղեկատվություն») և պայմանավորվում են չբացահայտել, չտարածել, չտպագրել կամ այլ կերպ նման տեղեկատվությունը չտրամադրել որևէ երրորդ կողմի՝ նախապես չստանալով մյուս կողմի գրավոր թույլտվությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Պայմանագրի ժամկետի ավարտից հետո սույն կետը պահպանում ե իր ուժը և գործում է 3 (երեք) տարի պայմանագրի դադարեցման կամ լուծման օրվանից սկսած:

8. Այլ դրույթներ

8.1 Սույն Պայմանագրի շրջանակներում ծանուցումները և ցանկացած այլ լրացուցիչ փաստաթղթերը վավեր են միայն եթե ուղարկված են գրավոր, հայերեն և/ կամ անգլերեն, էլեկտրոնային փոստով, փոստով կամ հաղորդակցության այլ եղանակով, և ստորագրված են Կողմի լիազոր ներկայացուցչի կողմից:

8.2 Սույն Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և համարվում են դրա անբաժանելի մասը:

8.3 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու հավասարազոր օրինակից: Կողմերից յուրաքանչյուրը ստանում է Պայմանագրի մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեներ, վավերապայմաններ և ստորագրություններ

ՆՎԻՐԱԲԵՐՈՂ

«Շտապիր դեպի բարին» երեխաների և քաղաքացիների աջակցության հիմնադրամ

Հասցե՝ ք.Երևան, Մ.Բաղրամյան, 3նրբ., 4/6 շ., 15բն.

ՀՎՀՀ՝ 08220919
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570079654760100

Տնօրենի ժ/պ՝ _____Ե. Հակոբյան

ՆՎԻՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ

Անյուտա Մելիքյան
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մ., գ. Շենիկ, Հ. Շիրազի փ., 2տ.
անձնագիր՝ AU0273895, 19.05.2021թ., 063
սոց.քարտ՝ 7404890012

_____Ա. Մելիքյան